

խնդիրների հետ։ Հարկաւոր է մանուկին դժագրութեան, նկարչութեան ու ձևեր ծեփելու արուեստի միջոցով ծանօթացնել իսկական ձևերի հետ։ Հնայել դրանց վրայ զուտ տեխնիքուկան կողմից, այլ ընդհանուր զարգացողական նշանակութեան, որ նրանք ունեն զգայարանքներով ստացած մտապատկերների զարգացման համար։ Ֆրէքէլի սկզբունքը, թէ այն, ինչ որ մանուկը տեսնում է թող ձեռքերով էլ կատարէ, պէտք է դործադրուի ոչ միայն մանկական պարտէզում այլ և դպրոցում։ Ենորհիւ դըժադրութեան մանուկի աշքը սկսում է ճշգրիտ, հետեւղական ձեռք տարբերել ձևերը, դոյները այլ և մանուկը սովորում է եղածը վերստուգել, ճշտել։

(շարունակելի)

Pessimist

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ՑԻԼԷՐԻ ԶԵՒԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ.

Մի ժանի խօսք.

Մեր մանկավարժական գրականութեան մէջ մինչեւ այժմ տիրող են եղել Գերմանիայում ծնած և զօրեղացած Հերբարտ-Յիլէրեան դպրոցի մտքերը։ Մեր մանկավարժները համարեա առանց բացառութեան քարոզել և քարոզում են, որ մանկավարժական խնդիրների լաւագոյն և ճշտագոյն ըմբռնումը Հերբարտի և Յիլէրի կողմից է եղել և որ մեր դպրոցները պէտք է բարեփոխուին այդ մանկավարժների ոգով։ Ի՞նդունելով հանդերձ, որ Հերբարտը, աւելի փոքր չափերով Յիլէրը մանկավարժական խնդիրների լուսաբանման և խորացման համար ընդհանուրագէս աշխատել են, հէնց սկզբից չէինք ցանկանալ թագշնել մեր խոր համոզումը, որ այդ անձնաւորութիւնների ազգեցութիւնը լրացէտք է անմիջական գոյն ունենայներկայի համար, այլ աւելի պատմական։ Նրանք պէտք է դառնան պատմական անձնաւորութիւններ այնպէս, ինչ պէս Ռուսօն, Լոկը, Կոմենիուսը և ուրիշները։ Նրանց մոքերի կորիզը, կամ աւելի ճիշտ այդ կորիզի որոշ մա-

սերը միմիայն պէտքէ պաղաբեր դառնան ներկայ մանկավարժութեան համար և չը պէտք է այդ կորիզի հետ այն սխալ ենթագրութիւնը կապել, թէ նա հնարաւորութիւն ունի իր մէջ ներկայ մանկավարժական խնդիրը ամբողջ ծաւալով պարունակելու նոր մեթոդները, նոր աշխատանքները ու հետազօտութիւնները կամաց-կամաց անկախութեան ճանապարհներ են բանում ներկայ մանկավարժութեան առաջ ազատուելու Հերքարտի և Յելլերի անմիջական և միակողմանի աղղեցութիւնից:

Այս ուղղութեամբ փորձեր Գերմանիայում արդէն սկսուած են գանազան կողմերից և տեսակէտներից: Հերքարտ-Յիլլէրեան գպրոցը աստիճանաբար իշնում է իր գերիշխան բարձունքից և ամեն կերպ աշխատում է բեփորմի փորձեր անել գիմանալու նոր ծագող ուղղութիւնների վտանգաւոր մրցմանը:

Մեզ մօտ Հերքարտ-Յիլլէրիան տեսակէտները գեռ շարունակում են առանց հակառակ կարծիքների գոյութեան և լուրջ քննադատականների տիրապետող կամ աւելի ճիշտ տիրապետել ցանկացող դրութեան մէջ մնալ: Իմ այս աշխատութիւնը թող առաջին փորձը լինի քննական վերաբերմունք ցոյց տալու Յիլլէրիանների այնքան մեծ պարծանք կազմող ձևական հինգ աստիճանների մասին:

Այս գրուածքս համալսարանական աշխատանք է, հրատարակուած գերմաներէն 1909 թուականին: Մի կողմից գերմանական մանկավարժական մասնագիտական միքանի թերթերում իմ գրքի մասին լոյս տեսած քաջալերական րեցենզիաները, որոնցից մէկի հեղինակի կարծիքով այս աշխատութիւնը այս թեմային վերաբերող լաւագոյն գրուածքների մէկը պէտք է համարել, միւս կողմից այն հետաքրքրութիւնը, որ ցոյց տուին մեր հայ մանկավարժները գերմաներէն լոյս տեսած իմ աշխատութեան վերաբերմամբ (պ. Ս. Մանդինեանը «Հոգիւառում» և պ. Յ. Տէր-Միրաբեանը «Նոր գպրոցի» 1909 թուի վերջին և 1910 թուի առաջին երկու համարներում), ինձ վատահութիւն ներշնչեցին հայերէնի փոխադրելու իմ գերմաներէն աշխատանքը, որոց տեղեր կրծատումներ, և որոշ տեղեր լուցումներ յացնելով:

Ցիլէրի ձեւական աստիճանները.

Կըթութիւնն ու դասաւանդումը գործունէութեան ձևեր են և ինչպէս ամեն մի գործունէութիւն պէտք է եշ-խուած լինի մի որոշ նպատակից, այնպէս և կըթութիւնը պէտք է իր առաջ մի շատ պարզ ու որոշ նպատակ ունենայ; Ցիլէրի կարծիքով կըթութեան ամենաբարձր նպատակն է աճող սերնդի կրօնա-բարոյական ընաւորութեան կազմակերպումը; Կըթական ամենալաւ գործունէութեան ձևերն են կառավա-րութիւնը (դիսցիպլինա) դաստիարակութիւնը և դասաւան-դումն: Կառավարութիւնը և դաստիարակութիւնը շատ քիչ բան անել կարող են, եթէ պակասում է դասաւանդումը: Հասակաւորներու պէտք է դասաւանդենք, ոաների մտապատ-կերների շրջանը կարդաւորենք, խորացնենք, ընդլայնենք, որով-հետեւ սանը միմիայն այսպիսի աշխատանքից յետոյ, այսինքն դասաւանդումից, կարող է իր համար մի ճիշտ աշխարհա-հայեացք կազմել: Կըթութեան դիմաւոր նպատակը ճիշտ բա-րոյականութիւնը և կրօնականութիւնը-երեխայի սրառում հիմ-նաւոր արմատներն ոցել կարող են միմիայն վերոցիշեալ ճիշտ աշխարհահայեացքի կազմակերպուելուց յետոյ:

Դասաւանդման կարեւորութիւնը ապացուցելուց յետոյ մի այլ նոյնքան կարեւոր հարց է յառաջանում. ի՞նչ կերպ, ի՞նչ հայացակէտերով պէտք է դասաւանդել, որովհետեւ դա-սաւանդել կարելի է բազմակերպ, ինչպէս այդ ցոյց է տալիս մանկավարժութեան պատմութիւնը: Ցիլէրը այս խնդրի վե-րաբերմամբ իր առանձին տեսակէտներն ունի, որոնց համա-խմբումից կազմւում են նրա առանձին մեթոդի հիմունքները: Ցիլէրի մեթոդը հիմնուած է իր ուսուցիչ Ներքարտի մանկա-վարժական ուսումնասիրութիւնների վրայ, սակայն Ցիլէրը բազմաթիւ խնդրիներում միմիայն գրգիռներ ստանալով՝ ա-ւելի ինքնուրոյն է մնացել, ուստի և ամեն մի գէպքում Ցիլ-էրին Ներքարտի ամենահաւատարիմ շարունակողը համարել, ինչպէս ոմանց կողմից ենթագրում է*), անճիշտ կլինէր:

Դպրոցը աշակերտներին պէտք է բազմաթիւ իմացու-թիւններ տայ և այն էլ մի որոշ ժամանակաշրջանում. և

*.) Ներքարտի հետ մօտ ծանօթանալ ցանկացողը Թող կարդա ձե-մարանի նախկին ուսունող Արէլի «Ներքարտ եւ նրա մանկավարժական սիստեմը» շահնկան աւարտական շարադրութիւնը, որը եւ առանձին դրով լոյս է տեսած:

որովհետեւ այդ իմացութիւնների քանակը քիչ չէ, ուստի և անհնար է այդ ըոլորը, ծրագրով պահանջածը միանգամից, անկարգ, անսխատեմ գառաւանդել։ Ուրեմն և պէտք է ունենալ մեթոդական մի ընթացք, որը համապատասխանուած մանկան հոգեբանութեանը՝ զառաւանդման և նիւթերի անկարգ յաջորդականութեանը վերջ է տալիս։

Ամեն մի դասաւանդւող առարկայ բազմաթիւ նիւթեր ունի, այդ նիւթերը պէտք է մաս-մաս տալ, որովհետեւ այդպիսի մասնիկներով իւրացնել տալը աւելի համապատասխան է մանկան հոգեբանութեան ընդունողական և վերարտադրողական կարողութեան։ Դասաւանդւող առարկաներից կազմած այդ առաւանձնակի ամբողջութիւնները կոչւում են «մեթոդական միութիւններ» և սրանց գլխաւոր յատկանեցը այն է, որ ամեն մէկը մտապատկերների շրջանի մի ամբողջութիւն է կազմում։ Վեթոդական միութիւննց մեծութիւնը չի կարելի նախօրօք որոշել, որովհետեւ նիւթերի ստորաբաժանման ժամանակ ոչ թէ ճէնց իրենք նիւթերն են իրըև ստորաբաժանման հիմունքներ յառաջանում, այլ աշակերտի հոգեկան զարդացման աստիճանը, նրա գիտակցութեան «նեղութիւնը և լայնութիւնը»։ այսինքն, տարբեր հոգեկանի տէր աշակերտների կարելի է տարբեր մեծութեան և մտապատկերների հարստութեան մեթոդական միութիւններով զբաղեցնել։ Ամեն մի մեթոդական միութիւն պէտք է մշակել ձեւական հինգանմիջապէս իրար յաջորդող աստիճանների համաձայն, ամեն մի աստիճան հիմնուած է հոգեբանական մի որոշ օրէնքի վրայ։

Ուրեմն ըստ ՑԵՍԵՍԻ ամբողջ տարրւայ ընթացքում գառաւանդւող առարկաների նիւթերը պէտք է ամբողջութիւնների կամ ինչպէս ինքն է ասում, մեթոդական միութիւնների վերածել։ ամեն մի մեթոդական միութիւն պէտք է մտապատկերների մի ամբողջութիւն, մի դաղափարի ներկայութիւն ունենայ և այդ ամբողջութիւնները պէտք է հինգ ձեւական աստիճաններով մշակել։ Այժմ անցնենք այդ աստիճանների նկարագրին։

Ամեն մի մեթոդական միութիւն, ինչպէս և ամեն մի նոր ժամ պէտք է սկսել նախ նպատակի ծանօթացմամբ։ Նպատակը չը պէտքէ տայ նորը, այլ պէտք է ուշագրութիւնը ուղղէ զէպի նորը, ու պէտք է գրգռէ աշակերտի ուշագրութիւնը և հետաքրքրութիւնն, պէտք է լինի կոնկրետ, ըմբռունելի, համապատասխան երեխաների ըմբռնման կարողութեան։

Դասի նպատակի որոշումից յետոյ չըպէտքէ նոր նիւթեր անմիջապէս տալ, որովհետեւ այդ ձեռով դժուար հասկանալի կը լինի աշակերտներին, այլ նոր նիւթեր առաջ և նպատակի

որոշումից յետոյ պէտքէ վերջեցել այն հին, ծանօթ նիւթերը, որոնք նմանութիւն ունին նոր քննելիք նիւթին: Հինի և նորի այս կապակցումն ու յարաբերումը անհրաժեշտ մի պայման է նորի հեշտ և լաւ ըմբռնման համար: Այս հանդամանքը հիմնեում է հոգեբանական ապերցեպցիալի օրէնքի վրայ, բայ որի «նոր ըմբռնելին շաղկապւում է եղածի, հնի, հետ: Ապօլուտ նորը, որը սովորողի մէջ կապակցութեան և ոչ մի հիմք չի գըտնում, չի կարող իւրացուել: Այդ նպատակի համար աւելի լաւ է հին նիւթերը կտոր կտոր ամբողջութիւններով քննուին, յետոյ ըոլորը միասին կապակցուին, այնպէս որ աշակերտը այդ ձեռվ վերաբարտադրելու հնարաւորութիւն ունենայ: Միմիայն այս կերպ կարող կը լինին հին մտապատկերները այն ուժը և ձեր ստանալ, որը անհրաժեշտ է նոր մտապատկերներին ասիմիւլացիա անելու համար: Դասաւանդման ժամանակ այս նախապատրաստական աշխատանքը ընկնում է տռաջին աստիճանինալիզի վրայ:

Անալիզի ժամանակ, երբ հինը և ծանօթն է մշակւում, չը պէտք է նոր ծանօթութիւններից ես կցել և պատմել, որովհետեւ գրանով աշակերտաների լարուածութիւնը և հետաքրքրութիւնը կարող է թուլանալ: Նորը և հինը, առաջին և երկրորդ աստիճանի նիւթերը պէտք է իրարից շատ խիստ զատուին և իրար յնաւնուին: Անալիզը պէտք է լինի «մանրամասն և նոր նիւթի ըոլոր մասներին յարաբերող և ապագայ դասաւանդման տրամադրութիւնն ու գոյնը իս մէջ պարունակող»: Այդպիսով ապագայ քննելիք նիւթին վերաբերող մտապատկերները մեծ չափերով կը վերաբարադրուին, աշակերտը ազատ շարժումի կը դնէ իր դիտակցութիւնը և եթէ երբեմն երկրորդական բաներ էլ ասի, ներողամիտ պէտք է լինել, որովհետեւ վերապատմելու և ամբողջացումի ժամանակ կարելի է այդ բացը լրացնել: Այս վերջիշումները և մշակումները պէտք է խօսակցութեան եղանակով տարուին:

Սինթէզ. Այս նախապատրաստութեանը յաջորդում է երկրորդ-սինթէզ-աստիճանը, որի ժամանակ նոր իմացութիւններ են տրուում աշակերտաներին և մշակւում: Նորը մշակելու մեթոգը տարբեր է նայած աշակերտաների հասակին և առարկայի որակին: օք. ցած դասարաններում հէքեաթը պէտք է պատմել, իսկ մեծ աշակերտաներին աստուածաշնչի կամ լեզուական մի կտոր կարդալ, աշխարհագրական մի նիւթիսուելով և նկարելով, ֆիզիքական մի նիւթ պատմելով և եքսպերիմենտներով դասաւանդել: Նոր մտապատկերները պէտք է աշակերտաները ուսուցչի օգնութեամբ վերակազմեն:

Նոր նիւթը չը պէտք է միանդամից տալ և ապա մշակել, այլ կտոր-կտոր, մի կտորը առանձին պէտք է պարզաբանել, անհասկանալի մասեցը բացատրել, որպէս զի եկող կտորների հետ պարզուած մասը կանոնաւոր յարաբերութեան մէջ մտնի, այն ինչ անորոշ և մութ կը մ'նայ, չի կարող հաճոյք արթնացնել և ազգեւ աշակերտի մտքի վրայ: Եթք կարդացուել կամ պատմուել է մի կտոր, դրան յաջորդում է որ և է աշակերտի կողմից կապակից կրկնումը: Աշակերտի պատմելու ժամանակ ոչ ուսուցիչը և ոչ էլ միւս աշակերտները չը պէտք է ընդհատեն նրան, կամ հարցերով և կամ յիշեցումներով, նոյն իսկ եթէ պատմողը լեզուական տեսակէտից շատ էլ լաւ չի խօսում: Պէտք է այդպիսի ազատ պատմելուց յետոյ եղանակացնել, թէ նիւթը ինչպէս է քմբոնուել աշակերտի կողմից և թէ ինչ սխալներ կատարուեցին:

Այդ սխալները ուղղելու, նիւթը աւելի լաւ մշակելու համար առաջին պատմողից յետոյ պէտք է աշակերտների հետ խօսակցութեան միջոցաւ սխալները ուղղել, պակասները լրացնել և ապա այդ կտորը կամ մասը նորից ամբողջացնել և վերնագիր տալ համաձայն այդ կտորի մէջ եղող գլխաւոր մտքի կամ բովանդակութեան: Այս ձեռվ պէտք է յաջորդ կտորները ուսուումնասիրել և այսպէս շարունակաբար մինչև բոլոր ամբողջութիւնները կը վերջանան և ապա դրանց կը յաջորդի ամբողջ նիւթի ամբողջական վերաբարագրում և կապակցումը: Մինչև աշակերտների նիւթի լիակատար իւրացումը անհրաժեշտ են բազմաթիւ կրկնութիւններ:

Պատմա-կրօնական նիւթերի դասաւանդման ժամանակ պէտք է հետեւեալ տեսակէտով առաջնորդուել. այդ նիւթերը երկու կողմ ունին իրենց մէջ. մէկ դէպէրի և անհատների պատահարները և արտաքին յարաբերութիւնները և մէկ էլ այդ իրողութիւնների մէջ թագնուած «արժէքի դատողութիւններ», «հիմնական սկզբունքներ», «առաջնորդող մաքեր», որոնք գոյն ու բովանդակութիւն են տալիս կոնկրետ նիւթերին Կոնկրետ նիւթը տալուց յետոյ համապատասխան հարցերով պէտք է օգնել, որ աշակերտը կարողանայ այդ հիմնական սկզբունքները, հոգեկան կեանքի զարգացման օբէնքները հանել և իր համար պարզել: Ապա այդ կրօնական և բարոյական մըտքերը իւրաք մօտ պէտք է դնել և կապակցել:

Ա.Ա.Օ.Յ.Ա.Յ.Ա. Եթէ դասաւորման նպատակը միմիայն կոնկրետ նիւթի դասաւանդումը լինի, այն դէպէում մինչև այժմ Կարագրած երկու-անալիկ և սինթէզ-աստիճանները բաւական կը լինէին, սակայն որովհետեւ դասաւանդման կարևորագոյն նը-

պատակներից մէկն է կոնկրետ նիւթերի մէջ պարունակուած արստրակտ-վերացական գաղափարները և օրէնքները հանել, ուստի և դասաւանդման ժամանակ նաև այդ նպատակին ծառայող այլ աստիճաններ պէտք է լինին: Արստրակտ նիւթ պատրաստի չի կարելի տալ, որովհետեւ այդ գէպքում նա աշակերտի համար անկենդան, անազգեցիկ մի նիւթ կը մնայ: Սինթէզ աստիճանի նիւթը պէտք է երրորդ—առօցի ացիա— աստիճանում նորից քննել, այդ նիւթին նման, հին փորձառութիւնների հետ համեմատել և ասլա զբանցից ընդհանուրը ու վերացականը եղակացնել և աշակերտներին պարզել: Երրորդ աստիճանում քննուող վերացականը գեռ կոնկրետ մամնակի մտապատկերների հետ կապեր ունի, այս կապերը սակայն պէտք է վերջացնել՝ նրան աւելի մաքուր վերացական դարձնելով:

ՍԻՄՏԵՄ. Այս նպատակին է ծառայում չորրորդ—սիստեմ—աստիճանը, ուր վերացականը զտւում է, զիտողական նիւթերից կտրում է իր արտաքին կապերը, բանաձեռում է արստրակտ եղանակով օրէնքը կամ գաղափարը և դոցա դարձնում գիտակցութեանը պարզ ու որոշ: Այս ձեռվ սաացած գաղափարները, կանոնները, օրէնքները, սկզբունքները որոնք այնքան անհրաժեշտ են մարդկային հոգեկան—գիտակցական կեանքի համար, պէտք է համեմատութեան մէջ դրուին հին, նման օրէնքների, գաղափարների հետ մի սիստեմ կազմելու նպատակով, ինչպէս այդ գոյութիւն ունի «մամնագիտութիւնների» մէջ: Սակայն դպրոցական և զիտութեան սիստեմը իրար նման չը պէտք է երեակայել, դրանց մէջ կան զգալի տարրերութիւններ: Նախ դպրոցական զբաղումները չեն տալիս տրամաբանօրէն կատարեալ գաղափարներ, այլ մանկան սուբեկտիւ կտրիքներին համապատասխանող, այդպիսի գաղափարները կարող են «սուբեկտիւ գաղափարներ» անուանել, այն ինչ զիտութիւնը ձգտում է կազմել տրամաբանական տեսակետից ուղղ գաղափարներ: Բացի այդ, զիտութեան սիստեմը հիմնուած է տրամաբանական ոգու վրայ: Ամեն մի կտոր այդ սիստեմի մէջ իր անփոփոխելի տրամաբանական տեղն ունի: Դպրոցական զիտութեան կամ սիստեմի մէջ չը կայ այդպիսի տրամաբանական անհրաժեշտիւն և հետեղականութիւն: Այն, ինչ զիտութեան սիստեմի մէջ առաջին աեղն է ըռնում, կարող է դպրոցական սիստեմում վերջին աեղը ըռնել և ընդհակառակն: Դպրոցը սիստեմ կազմելիս ինկատի է ունենում սուբեկտիւ—հոգերանական պատճառները և կարիքները: Սակայն դպրոցական սիստեմի վերջնական նպատակն է մօտենալ զիտութեան սիս-

տեմին, իր հոգեբանական տեսակետով դասաւորած նիւթերը վերջ ի վերջոյ կարդաւորել գիտական տեսակետով:

Մեթոդ։ Մինչև այժմ քննուած աստիճանները աշակերտներին այս ու այն ձևով իմացութիւններ էին տալիս և այդ նիւթերը մշակում։ Սակայն ի՞նչ արժեք ունին այդ իմացութիւնները, եթէ աշակերտը չի կարող գործադրել, հարկաւոր ժամանակին։ Ինչի՞ պէտք է այն օրէնքը, այն դաշտավարը, եթէ աշակերտը դրանց համապատասխան կոնկրետ գէպքերի ժամանակ չի գիտակցում օրէնքի, դաշտավարի ներկայութիւնը։ Մինչև չորսրդ աստիճանը աշակերտը գիտողականից բարձրանում է գէպքի զուտ արտաքակտը-բնդհանուրը։ Այս ընդհանուրից սակայն նորից պէտք է իջնել գէպք կոնկրետը, մասնակին, որպէս զի աշակերտը վարժուի դաշտավարների գործադրութեանը։ Այս կարելին կոչուած է բաւարարելու հինգերորդ աստիճանը՝ մեթոդը։

Այս աստիճանում սիստեմի կարգաւորումը այլ կերպ է փոփոխութեամբ, նոր նիւթ է տրւում՝ որպէս զի աշակերտը կարողանայ օրէնքի կիրառումները տեսնել, գործադրել անձամբ։ Այս եղանակով գործունէութիւնը աշակերտի հոգին կը դարձնէ շարժուն, կենդանի և կօժինացիաների ընդունակ։ Այս վերջին աստիճանի մշակումից յետոյ «մեթոդական միութիւնը» համանում է իս վախճանին։

Հինգ ձևական աստիճանները պէտք է գործադրել ամեն մի առարկայի և նիւթի զառաւանդման ժամանակ առանց բացառութեան։ քմահաճ վերաբերմունք գէպք աստիճանները անթոյլատրելի է։

Ցիլերի այս տեսութիւնը դպրոցական կեանքի վրայ ուշնեցաւ մեծ ազդեցութիւն և հեռու չէր լինել ճշմարտութիւնից այն պնդումը, թէ Ցիլերի այս տեսութիւնը մինչև վերջին ժամանակները եղել է ամենատարածուածը, ուժեղը և հերթարտ Ցիլերիան ամենամեծ մանկավարժական բանակից պաշտպանուածը։ Ցիլերը ինքը ագիտատօքական ընդունակութիւնների տէր մարդ էր և ամենամեծ ազդեցութիւն ունեցաւ իր տեսութեան տարածման վրայ։ Մանաւանդ մեծ նշանակութիւն ունեցաւ այս խնդրի ընդարձակման գործում Լայպցիգի համալսարանում 1862 թուին հիմնուած մանկավարժական սեմինարը իր փորձնական դպրոցով, որտեղ աւարտողները, յայտնի դարձած մանկավարժները, մեծապէս նպաստեցին Ցիլերի դաշտավարների տարածմանը։ Այս ուղղութեամբ ոչ պակաս նշանակութիւն ունեցաւ նաև Ցիլերի կողմից հիմնած և ներկայում ևս գոյութիւն ունեցաղ գերմանական «Գիտական մանկավարժութեան ընկերութիւնը»։

(շարունակելի)

Դ. Էղիլիան

